ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 5-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց Ծաղկազարդը՝ Հիսուս Քրիստոսի՝ Երուսաղեմ հաղթական մուտքի հիշատակը: Ծաղկազարդի օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ նաեւ հռչակված է Մանուկների օրհնության օր:

Տոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում առավոտյան կատարվեց հանդիսավոր ժամերգություն, հավարտ որի Մայր Տաճարի առջեւ, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Անդաստանի արարողություն: Օրհնվեցին աշխարհի չորս կողմերը, ապա նաեւ՝ ուռենու ճյուղեր, որոնք արարողությունից հետո բաժանվեցին հավատացյալներին: Անդաստանի արարողության վերջում Վեհափառ Հայրապետը կատարեց Մանուկների օրհնության հատուկ կարգ, որին մասնակցեցին Հայորդյաց տների սաներ եւ բազում մանուկներ:

Ապա Մայր Տաճարում, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը: Գերաշնորհ Սրբազանն իր քարոզում անդրադարձավ Ծաղկազարդի տոնի խորհրդին եւ կոչ արեց հավատացյալ հայորդիներին չնմանվելու մարդկանց այն բազմությանը, որ թեպետ ցնծությամբ եւ մեծ շուքով ընդունեցին Հիսուս Քրիստոսի մուտքը Երուսաղեմ, սակայն մի քանի օր անց աղաղակում էին, որ Տերը խաչը հանվի:

Հավարտ Ս. Պատարագի Վեհափառ Հայրապետը վերստին կատարեց Մանուկների օրհնության կարգ, որից հետո Նորին Սրբությունը, շնորհավորելով ու իր օրհնությունը բաշխելով ամենքին, փոքրիկներին տոնի առիթով նվերներ հանձնեց:

Այնուհետեւ բազմաթիվ մանուկներ մասնակցեցին Սուրբ Գրիգոր Լուսավորիչ կամարի առջեւ Մայր Աթոռի եւ ՀԲԸՄ հովանավորությամբ գործող Հայորդյաց տների ջանքերով կազմակերպված կավճանկարի՝ ավանդական դարձած մրցույթին: Օրվա ընթացքին Մայր Աթոռում ազգային մեղեդիների բազում կատարումներով հանդես եկավ Մալաթիայի հայորդյաց տան փողային նվագախումբը:

ՎԵՂԱՐԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ Տ. ԽՈՐԵՆ ԱԲԵՂԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Ապրիլի 5-ին՝ Ծաղկազարդի տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ կատարվեց Տ. Խորեն աբեղա Հովհաննիսյանի վեղարի տվչությունը՝ ձեռամբ Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանի:

2002թ. օգոստոսի 7-ին Հայրապետական տնօրինությամբ Տ. Խորեն աբղ. Հովհաննիս-



Ծաղկազարդ

Կավճանկար